ՀՀ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԳԱՂԹ. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԸՆԿԵՐԱԲԱՆԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹԻՒՆ

ԱՆԴՐԱՆԻԿ ՇԱՀԻՆԵԱՆ
shahinyan_90@mail.ru

ՄՈՒՏՔ

Ներկայ ընկերաբանական ուսումնասիրութիւնը խարսխուած է երիտասարդների աշխատանքային գաղթի հարցի վերաբերեալ որակական հետազօտութիւնների ու վերլուծութիւնների վրայ: Հիմնահարցը դիտարկուել է վերջին երեք տարիների (2021-23)՝ սեռով, տարիքով ու ընկերային վիճակի սրացումներով յառաջացած խաւարկումներով, աստիճանակարգութիւնով, գաղթելու տրամադրութիւն ունեցող երիտասարդների ընտրանքային հետազօտութեանը՝ Հայաստանի Հանրապետութիւնում առկայ գիտական, հասարակական եւ պետական-ոլորտային կառոյցների փորձագէտ-մասնագէտների շրջանում:

Յօդուածի հետազօտութեան շրջանակներում քննութեան ենք ենթարկել «միգրացիա/գաղթ» եւ «զարգացում»[1] հասկացութիւնները, մասնաւորապէս երիտասարդների զարգացման գործընթացով պայմանաւորուած, կարեւորել երիտասարդների զբաղուածութեան հարցերը, որոնք ՀՀից երիտասարդների արտաքին աշխատանքային գաղթի պատճառ են դառնում:

Անդրադարձել ենք նաեւ աշխատանքային գաղթի բացասական ազդեցութիւններին, ռիսկերին՝ երիտասարդների ինքնիրացման գործընթացում, ինչպէս նաեւ մասնագիտութեան ընտրութեան ու նպատակակէտ երկրների ընտրութեան հարցերին: Դիտարկել ենք նաեւ անվտանգ տեղափոխութեան հարցերը՝ նկատի առնելով համապատասխան փորձագէտների խորհուրդները՝ հիմնախնդրով զբաղուող կառոյցների մասին:

---

[1] **Միգրացիա.-** (լատիներէն migratio, migro - անցնել, վերաբնակուել, հայերէն՝ գաղթ) բնակչութեան, մարդկանց տեղաշարժ՝ մշտական կամ ժամանակաւոր բնակավայրը փոխելու նպատակով: Ընդգրկում է բնակավայրից հեռացողների (էմիգրացիա՝ արտագաղթ) ու եկողների (իմիգրացիա՝ ներգաղթ) խմբերը: Դրանց գումարն արտայայտում է գաղթի ընդհանուր, իսկ տարբերութիւնը՝ զուտ մեծութիւնը**)**: **«Զարգացում»** հասկացութիւնը եւ «միգրացիա»ն, մասնաւորապէս «աշխատանքային միգրացիա»ն, գտնւում են սերտ կապերի մէջ: Գաղթի միջոցով տեղի է ունենում քաղաքակրթութիւնների երկխօսութիւն, նոր գիտելիքների, կարողութիւնների եւ հմտութիւնների ձեռքբերում, կրթական աստիճանի բարձրացում, տեղեկատուական արհեստագիտութիւնների տիրապետում, ինչպէս նաեւ գումարների ներհոսք: Ետ վերադառնալով՝ գաղթողները վերոնշեալ հմտութիւնները ներդնում են հայրենիքի **զարգացման եւ շէնացման** գործում:

ՆԵՐԱԾՈՒԹԻՒՆ

Սոյն որակական հետազօտութեան իրականացման հիմնանպատակն է գաղթի հասկացութիւնների զարգացումը, ընկերային երեւոյթների որակական երեսակների ըմբռնումը առաւելապէս՝ բնական՝ ոչ-փորձարարական պայմաններում: Հետազօտութեան տուեալների վերլուծութեան գործընթացը միտուած է նշանակութիւնների, գաղթի կենսափորձի եւ մօտեցումների վերհանմանը: Մասնաւոր վերլուծութեան նպատակները տարբերւում են՝ ըստ մեր կողմից իրականացուած հետազօտութեան նպատակներից. վերլուծութիւնը միտուած է գաղթի ենթախորքի հասկացմանը, օրինակ՝ ինչպէ՞ս են տնտեսական, քաղաքական, ընկերային, մշակութային եւ կազմակերպական գործօնները ազդում երիտասարդների աշխատանքային գաղթի երեւոյթի վրայ: Այն ուղղուած է մարդկանց պատկերացումներին, մօտեցումներին, փորձի բացայայտմանն ու խնդիրների հասկացմանը:

Յօդուածի շրջանակում առաջադրուած գիտական վարկածներն էին.-

1) Գաղթի դիմող անձանց պատճառները հիմնականում հոգեբանական են՝ պայմանաւորուած յետպատերազմական վախերով եւ բացասական սպասումներով,
2) Երիտասարդների զբաղուածութեան հարցերը ՀՀում ունեն կազմակերպական բացթողումներ, որն էլ դառնում է երիտասարդների արտաքին աշխատանքային գաղթի (ԱԱԳ) դիմելու առանցքային պատճառներից մէկը,
3) Երիտասարդութիւնը հիմնականում նախընտրում է մեկնել ԱՄՆ եւ եւրոպական երկրներ, քան Ռուսաստանի Դաշնութիւն՝ պայմանաւորուած վերջին շրջանում պատերազմական գործողութիւններով:

Վերլուծութիւնն իրականացրել ենք հիմնուելով մեթոդների միջոցով հաւաքուած տեղեկատուութեան սղագրման վրայ: Այս իմաստով, իւրաքանչիւր տուեալ վերածել ենք գրութեան, այնուհետեւ՝ ենթարկել վերլուծութեան: Հարցազրոյցների, նաեւ խմբային ու ընտրովի խմբի քննարկումներից ստացուած ձայնագրութիւնները սղագրել ենք բառ առ բառ, այնուհետեւ սկսել վերլուծութեան գործընթացը:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹԻՒՆ

Ընդհանուր առմամբ, վերլուծական գործընթացը իրականացրել ենք յառաջբերական/հետեւական (ընդհանուրից մասնաւոր, deductive) եւ մակածական (մասնաւորից ընդհանուր, inductive) մեթոդներով:

- Ո՞րն է ստացուած տուեալների հիմնական «հաղորդագրութիւնը», տուեալները ի՞նչ են «ասում/պատմում»,

- Ինչպիսի՞ն է հիմնական տեղեկատուների մօտեցումը, ի՞նչ ընկալումներ, դիրքորոշումներ են արտայայտուել,

- Որքանո՞վ է շեշտադրում իրական, առկայ իրավիճակը կամ իդէալական իրավիճակը:

Մենք՝ 1) Սղագրել ենք տուեալները, մաքրել, դասաւորել, ձեւաչափել, տող առ տող համարակալել սղագրութիւնը, 2) Կարդացել ու վերընթերցել ենք բոլոր սղագրութիւնները, ստացուած ամբողջ նիւթը մշակել այնքան, մինչեւ որոշակիացուի վերլուծութեան շրջանակը՝ բացատրական (երբ վերլուծութիւնը պատասխանում է հետազօտական հարցին) կամ հետախուզական (երբ վերլուծութիւնը հնարաւորինս մանրամասն ներկայացնում է ստացուած տուեալները): Այս փուլում վերլուծաբանը ուրուագծում է տուեալների կոդաւորման իր յատակագիծը:

Աղիւսակ 1. Փորձագիտական հարցման մասնակիցների տուեալները		
Փորձագէտի անուանումը	**Կառոյց**	**Պաշտօն**
N1	ՀՀ ԳԱԱ Հնագիտութեան եւ ազգագրութեան ինստիտուտ	Էթնոսոցիոլոգիայի բաժնի վարիչ
N2	ՀՀ (ներքին գործերի նախարարութեան Միգրացիայի եւ քաղաքացիութեան ծառայութիւն, ՆԳՆ ՄՔԾ)	Աշխատանքային միգրացիայի եւ մշտադիտարկման բաժնի պետ
N3	ՀՀ (Վիճակագրական կոմիտէ, ՎԿ)	Շիրակի մարզային վարչութեան պետ
N4	«Առաքելութիւն Հայաստան» բարեգործական հասարակական կազմակերպութիւն ՀԿ	Թիմի ղեկավար, վերահսկիչ (աշխատանքների կազմակերպող, յարաբերութիւնների կարգաւորող, խորհրդատուութիւն տրամադրող մասնագէտ)
N5	«ԿԱԶԱ» շուէյցարական մարդասիրական հիմնադրամ	թէժ գծի պատասխանատու
N6	«Հայկական Կարիտաս» բարեսիրական հասարակական կազմակերպութիւն	գաղթի փորձագէտ, շահերի պաշտպան

ՔՆՆԱՐԿՈՒՄ

Ստորեւ քննւում են «Երիտասարդների աշխատանքային միգրացիայի հարցի շուրջ. փորձագիտական սոցիոլոգիական ուսումնասիրութիւն» թեմայով հետազօտութեան արդիւնքները:

***Հարց 1**.- Ըստ Ձեզ՝ ի՞նչ վիճակում է սեռով, տարիքով ու խաւարկման աստիճանակարգութիւնով պայմանաւորուած գաղթի միտուածութիւնը ՀՀում: Խնդրում ենք ներկայացնել վերջին երեք տարիների տուեալները:*

Պատասխան.- Գաղթի միտուածութիւնը սեռով, տարիքով ու խաւարկումների աստիճանակարգութիւնով պայմանաւորուած հարցի առնչութեամբ՝ փորձագէտները շեշտել են, որ ԱԱԳ գործընթացներում ներգրաւուած են

ե՛ւ մասնագիտութիւն ունեցողները, ե՛ւ բարձրագոյն կրթութիւն չունեցողները: Ըստ նրանց տեսակէտերի՝ բարձրագոյն եւ յետբուհական կրթութիւն ունեցողներից շատ քչերն են ետ վերադառնում (մօտաւորապէս 2 կամ 2,5 տոկոս): Այդ նոյն բարձրագոյն եւ յետբուհական կրթութիւն ունեցող գաղթականները կազմում են մօտաւորապէս գաղթողների 15 տոկոսը: Սեռատարիքային կազմի առումով, սովորաբար երեք խումբ ենք առանձնացնում՝ երիտասարդ (22-33), միջին տարիքի (35-45) եւ աւագ (45-55): ՀՀից մեկնողները հիմնականում միջին տարիքի են, որոնց մէջ գերակշռում է նաեւ երիտասարդութիւնը: Ըստ սեռի՝ հիմնականում տղամարդիկ են մեկնում, մեկնողների մէջ կանայք կազմում են 10 տոկոս:

Փորձագէտները նաեւ նշել էին, որ որպէս աղբիւր պէտք է ընդունել ՀՀ ՎԿի եւ որակական հետազօտութիւնների տուեալները, որոնք հիմնականում համադրւում են: Ըստ թուաքանակի՝ նախկինում ՀՀից տարեկան (երեք տարուայ ընթացքում՝ 2020, 2021, 2022) 30-40 հազար ԱԱԳ ենք ունեցել: Երբ որ համեմատում ենք գաղթական աւանդոյթներ ունեցող տարածաշրջանների հետ, մասնաւորապէս՝ Գեղարքունիքի, Շիրակի, Լօռու մի հատուածի: Իսկ այժմ դա ընդգրկում է ամբողջ ՀՀն, քանի որ այժմ ՀՀի բոլոր բնակավայրերից են արտագաղթում:

***Հարց 2**.- Ըստ Ձեզ՝ ի՞նչ կապ կայ «միգրացիա» եւ «զարգացում» հասկացութիւնների միջեւ, մասնաւորապէս երիտասարդների զարգացման գործընթացով պայմանաւորուած:*

Փորձագէտների պնդմամբ, ուղիղ կապ կայ «միգրացիա» եւ «զարգացում» հասկացութիւնների միջեւ, քանի որ ԱԱԳերը հիմնականում ձեռք են բերում մասնագիտական նոր գիտելիքներ, նոր հմտութիւններ եւ, իհարկէ, դրամական միջոցներ: ԵՄ երկրներ մեկնող եւ ապաստանի դիմում ներկայացնողների 80%ը կորցնում է իր աշխատելու հմտութիւնը, քանի որ ԵՄ երկներում ապաստան հայցողները աշխատելու իրաւունք չունեն, եւ որքան երկար է տեւում դիմումի քննութիւնը, այնքան այդ մարդիկ վերածւում են մարդասիրական օգնութիւն ստացողների եւ յետագայում դժուար վերահամարկուողների:

«Միգրացիա» եւ «զարգացում» հասկացութիւնների առնչութեամբ, այլ փորձագէտներ նշում են, որ գաղթողների մասնագիտացում չունեցող խումբը վերադառնալով ՀՀ կրկին առաջացնում է տնտեսական, ընկերային մի շարք խնդիրներ, քանի որ շատերը նախքան մեկնելը վաճառում են բնակարանները, իսկ վերադառնալիս ունենում են կացարանի խնդիր: Այս դէպքում բնակարանների ձեռքբերման, վարձավճարի փոխհատուցման, տեղաւորման, պատշաճեցման, աշխատանքային ծրագրի կազմման եւ հետեւողական մշտադիտարկման աշխատանքի իրականացման անհրաժեշտութիւն է առաջանում: Իսկ բարձր որակաւորում, մասնաւորապէս յետբուհական կրթութիւն, ունեցողների պարագայում այլ է դրսեւորումը,

որովհետեւ վերադարձած մարդիկ իրենց հետ բերում են աւելի զարգացնող մշակոյթ, իրականացնում են նաեւ ներդրումներ, որ եւ վերադարձի, հայրենիքում հիմնաւորուելու նպատակներից մէկն է: Իսկ նմանատիպ նպատակները (գլխաւորապէս՝ գործարք) հիմնականում իրագործւում են: Այդ դէպքերից մէկին առնչուած մի փորձագէտ բերել է մէկ օրինակ, երբ Սիւնիքի մարզում, գիւղատնտեսական բարձրագոյն կրթութեամբ անձը, ժամանակաւոր ԱԱԳից վերադարձել է եւ տեղում յաջողութեամբ օգտագործել մեղուաբուծութեան զարգացման իր հետ բերած նոր մոդէլը եւ արհեստագիտութիւնը: Վերադարձած գաղթականը նախկինում նմանատիպ հմտութիւններ չի ունեցել:

Փորձագէտների կարծիքով, այն երկրները, որտեղ մեկնում են գաղթողները, այդ երկրներում օգտւում են գաղթողների մարդկային աղբիւրներից, հնարաւորութիւններից, որպէս աշխատուժ: Այս առումով հարկաւոր է հաշուի առնել ուղեղների արտահոսքի խնդիրը, այն երիտասարդներին, որոնք իրենց ներդրումներն են ունենում այդ երկրների զարգացման գործում: Բնականաբար հարց է ծագում, թէ ի՛նչ են ստանում այն երկրները, որոնք գաղթողներ են ստանում, մասնաւորապէս արտահանող երկրների տնտեսութեան զարգացման առումով: Հիմնականում՝ ընդունած երկրում եղած ժամանակ ձեռք բերած հմտութիւններն են, որոնք վերադառնալուց ներդնում են երկրի տնտեսութեան զարգացման մէջ: ՀՀի պարագայում մի փոքր այլ է, քանի որ ՀՀից գնացողների մեծ մասը զբաղւում է ֆիզիկական աշխատանքով. արհեստաւորներ են, գիւղատնտեսութեան ոլորտով զբաղուողներ: Գաղթի այս խնդիրը որակական զարգացման չի բերում, այլ ընկերային *վարընթաց* շարժունութեան է տանում, քանի որ նրանց մէջ լինում են նաեւ բարձր որակաւորում ունեցողներ, որոնք եւս ցածր որակաւորում պահանջող աշխատանք են անում: Գաղթ եւ զարգացում խնդիրը ՀՀի պարագայում դեռ ամբողջական զարգացում չի ապահովում:

***Հարց 3**.- Ինչպէ՞ս է իրականացւում ՀՀ աշխատուժի ներքին եւ արտաքին տեղաշարժերի կարգաւորման միասնական պետական քաղաքականութիւնը:*

Մեր փորձագէտները նշեցին, որ ՀՀ պետական քաղաքականութեան ոլորտում եւս դրական տեղաշարժ է նկատւում, քանի որ մասնաւոր ոլորտների հետ պետութիւնն առաւել սերտ հաղորդակցութիւն է սկսել ցուցաբերել: Դրանք վերաբերում են ե՛ւ աջակցութիւնների տրամադրմանը, ե՛ւ ծառայութիւնների մատուցմանը: Իրականացուող գործակցութիւնները նախկինում երբեւէ այս չափերի չեն հասել: Դրանք միտում ունեն ծառայութիւնների եւ աջակցութիւնների վերածածկոյթի բացառման, ինչպէս նաեւ պետական եւ հասարակական ոլորտներում աշխատատեղերի հետ կապուած մասնագիտական կողմնորոշման, վերապատրաստումների եւ

նոր մասնագիտութիւնների ձեռք բերման: Մասնագիտացման դասընթացները, որոնք ՀԿներն են կազմակերպում պետական ոլորտում, փորձում ենք փոխարինել այլ մասնագիտացումների դասընթացներով, որոնք արդիւնաւէտ են լինում:

Համաձայն փորձագէտների **միասնական տեսակէտի՝** ԱԱԳի վերաբերեալ դեռեւս չկայ յատուկ օրէնսդրական դաշտ, այսինքն՝ չկայ օրէնք, որը կարող է կարգաւորել այդ խնդիրը: Այս առումով ՀՀն ունի պայմանագրեր որոշակի երկրների հետ՝ գաղթի հարցերի կարգաւորման համար (ընդունելու, վերադարձի): Հիմնականում ՌԴի հետ է, որ պայմանագրեր կան, երբ գործատուն կարող է ընդունել, որոշակի հարցեր քննարկել, առցանց հարթակում էլ է հնարաւոր գրանցուել գործատուի մօտ, այնուհետեւ որոշակի ընթացակարգեր անցնել, յետոյ նոր անցնել աշխատանքի: Բայց ընդհանուր առմամբ ՀՀ արտաքին եւ ներքին գաղթի քաղաքականութեան վերաբերեալ մշակուած ամբողջական հայեցակարգ դեռեւս չկայ: Իսկ այսօր բոլոր ներքին գործընթացները մարզերից դէպի Երեւան կամ միւս կենտրոններ, տեղի են ունենում բուռն թափով:

Հարց 4.- *«Միջազգային ինչպիսի՞ պայմանագրեր են կնքուել եւ կնքւում են արտագնայ աշխատանքների կազմակերպման, ինչպէս նաեւ աշխատանքային գաղթողների շահերի պաշտպանութեան հարցերով»:*

Այս հարցին պատասխանել են, որ ամենամեծ թուով գաղթողներին առնչուող պայմանագիրը ԵԱՏՄ պայմանագիրն է, որը վերաբերում է բացառապէս անդամ երկրների աշխատանքային գաղթողներին եւ նրանց ընտանիքի անդամներին: Չնայած որ ՌԴ գաղթի օրէնսդրութեան խստացումները, որոնք վերաբերում են նաեւ ԵԱՏՄ անդամ երկրների քաղաքացիներին, ԵԱՏՄ պայմանագիրը որոշակիօրէն խախտում են, բայց դա ռուսներին չի խանգարում: Յաջորդը 2018 Փետրուարի 12ին ՀՀի եւ Բուլղարիայի միջեւ կնքուած «Համաձայնագիր Հայաստանի Հանրապետութեան եւ Բուլղարիայի Հանրապետութեան միջեւ աշխատանքային միգրացիայի կանոնակարգման մասին» համաձայնագիրն է, որը, սակայն, առայժմ չի գործում: 2023ին աշխատանքային գաղթի համաձայնագիր է ստորագրուել ԱՄԷի հետ, որը դեռեւս չի վաւերացուել: Փորձագէտները որպէս նշուած հարցին պատասխան ասում են նաեւ, որ դաշտում կան պայմանագրեր, մասնաւորապէս Եւրոպա արտագաղթած ՀՀ այն քաղաքացիների հետ, որոնք այնտեղ ապրում եւ աշխատում են՝ ունենալով աշխատելու օրինական իրաւունք: Բացի դրանից՝ նաեւ տուեալ եւրոպական երկիրը ՀՀ վերադառնալու պարագայում որոշակի գումար է տրամադրում այստեղ ներդրում իրականացնելու համար, որը վերաբերում է ոչ միայն մէկ անձի, այլ նաեւ նրա ընտանիքի անդամներին: Այդպիսի հնարաւորութիւն կայ նաեւ ԱՊՀ երկրների պարագայում, եթէ հարազատը սերտ ազգակցական կապ ունի:

Շահերի պաշտպանութեան հարցերով միքանի երկրներ կան, այդ թւում եւ ՌԴՆ. առողջապահական հարցերով որոշակի ապահովագրութիւն կարող են տրամադրել գաղթողներին, ինչպէս նաեւ կարգաւորել գրանցման եւ այլ հարցեր: Սակայն աշխատանքը աշխատանքային ստաժ համարւում է, թէ ոչ՝ յայտնի չէ: Այն մի ժամանակ քննարկւում էր, սակայն փորձագէտները յստակ տեղեկութիւն չեն հաղորդում:

Հարց 5.- *Ըստ Ձեզ՝ ինչքանո՞վ են կազմակերպուած երիտասարդների զբաղուածութեան հարցերը, որոնք պատճառ են դառնում ՀՀից երիտասարդների արտաքին աշխատանքային գաղթի դիմելուն:*

Փորձագէտները երիտասարդների զբաղուածութեան խնդիրը համարեցին ամենալուրջը, քանի որ ՀՀում գործազուրկների ճնշող մեծամասնութիւնը երիտասարդներն են: Դպրոցը եւ բուհը աւարտելուց յետոյ յատկապէս գիւղական բնակավայրերի երիտասարդների շրջանում ձեւաւորւում են աշխատանքային գաղթի մեկնելու դրդապատճառները, մանաւանդ որ նրանք ՀՀում աշխատուժի իրացման այլ ոլորտներ չեն տեսնում: Այստեղ խնդիրն այլ է. փորձագէտներից մէկը անդրադարձաւ ունեզրկութեան տեսութեանը, մասնաւորապէս նշեց, որ օրինակուող խմբերի խնդիրներ կան, որտեղ մէկը տեսնում է, որ իրենց բնակավայրից որոշ մարդիկ բռնել են աշխատանքային գաղթի ուղին, եւ դրսից գումարի որոշակի փոխանցումներ են կատարում, այդ ընտանիքի կենցաղային վիճակը որոշակիօրէն սկսում է լաւանալ, ինքնաշարժ են գնում, բնակարան են կառուցում, վերանորոգում: Այս օրինակուող խմբերի վարքագիծը սկսում է ազդել մնացածի վրայ եւ նրանց մօտ ձեւաւորում են աշխատանքային գաղթի դրդապատճառ: Բացի այս ամէնից՝ գաղթը երիտասարդների մօտ կարգավիճակի փոփոխութեան խնդիր է առաջացնում: Աշխատանքային գաղթի մեկնելը, յատկապէս բանակից յետոյ, դարձել է անցումային ծէսի նման բան. յատկապէս ծնողներից անկախ լինելը, առանձին ապրելը, այնուհետեւ սեռոյթի որոշակի խնդիրներ լուծելը: Երիտասարդը, որը տանը երբեք ճաշ չի պատրաստել կամ սենեակը չի մաքրել ու յարդարել, գաղթի վայրում ստիպուած է այդ բոլորն անել, ասել է թէ՝ որոշակի նոր դերեր է վերցնում իր վրայ: Այսպիսով, տուեալ երիտասարդը դառնում է կերակրող ձեռք, աշխատանքային գաղթի մեկնելուց մէկ-երկու տարի յետոյ ընտանիքի ընկերային վիճակը սկսում է բարելաւուել: Համայնքը արդէն այդ անձին վերաբերւում է որպէս հասուն եւ ընտանիք պահող մարդու: Համայնքի համար աշխատանքային գաղթն ընկալւում է որպէս հասունացման կարեւոր պայմաններից մէկը: Տեղի է ունենում փորձի եւ գիտելիքների ձեռքբերում, ճաշակի փոփոխութիւն եւն.:

Հարց 6.- Աշխատանքային գաղթի առաջացրած բացասական ազդեցութիւնների եւ ռիսկերի առնչութեամբ, փորձագէտները նշեցին, որ այդ խնդիրները եւ ռիսկերը հիմնականում մասնագիտական աճին խոչընդո-

տող երեւոյթներն են, քանի որ արտագնայ աշխատանքի մեկնած քաղաքացին առաջին հերթին հացի խնդիրը լուծելու մասին է մտածում եւ աւելի քիչ հնարաւորութիւն է ունենում մասնագիտական աճի, անձի զարգացման: Ինքնադրսեւորուելու հնարաւորութիւնները աւելի քիչ են լինում: Մեզ յայտնի է, որ երիտասարդների մասնագիտական կրթութիւն ունենալու դէպքում այդ խնդիրը եւս առկայ է: Շատ յաճախ երիտասարդը ընտրում է ոչ այնքան մասնագիտական աշխատանքի հնարաւորութիւնը, քանի որ երկրորդ տարբերակը աւելի մեծ հնարաւորութիւններ է ընձեռում: Արտերկրում եւ ՀՀում այդ մօտեցումները նոյնն են:

Որպէս ԱԱԳի բացասական ազդեցութիւն, փորձագէտներից մէկը նշեց, որ այն երբեմն բերում է ամուսնութեան տարիքի բարձրացմանը, որովհետեւ, ըստ հետազօտութիւնների, երիտասարդները, աշխատանքային գաղթի դիմելով, իրենց առջեւ նպատակներ են դնում. «Այս անգամ գնամ, կը գամ բնակարանը կը վերանորոգեմ, յետոյ նոր կ'ամուսնանամ»: Այսպէս շարունակ գնում են, ապա վերադառնում եւ այլ խնդիրներ են լուծում: Իսկ այս շարունակական գործընթացը յանգեցնում է ամուսնութեան տարիքի բարձրացմանը: Բացի սրանից՝ երիտասարդ ընտանիքների վրայ այն բացասական է ազդում քանի որ ընտանիքը ազգագրական եւ ընկերային շղթայական փուլերից կազմուած մի ամբողջութիւն է, որը սկսւում է ծանօթութիւնից, այնուհետեւ՝ ամուսնութիւն, երեխաներ...: Ըստ նոյն փորձագէտի հետազօտութիւններից մէկի՝ վերցրել են երկու խումբ ընտանիքներ՝ գաղթածներ եւ ընկերային կայունութեան խնդիրներ չունեցող ընտանիքներ եւ այնպիսիք, որոնք ունէին ԱԱԳեր, որտեղ փորձ են արել հասկանալ ընտանիքների կայունութեան եւ ռիսկերի խնդիրը: Այդ հետազօտութիւնը ցոյց է տուել, որ գաղթողների մօտ 10 տոկոսը ամուսնութիւնից մէկ-երկու ամիս յետոյ դիմում է ԱԱԳի, որը ամուսինների պատշաճեցման հետ կապուած որոշակի խնդիրներ է առաջացնում: Դէպքեր են եղել, երբ երեխան ծնուել է գաղթած ծնողի բացակայութեան: Բազմաթիւ նման խնդիրներ կան, որոնք իրենց ազդեցութիւնն են թողնում ընտանիքի վրայ:

Այս ամէնից բացի՝ գաղտնիք չէ, որ երիտասարդները սեռահասունութեան հետ կապուած փորձը եւ հմտութիւնները ձեռք են բերում դրսում: Սա եւս որոշակի ռիսկեր է պարունակում այն առումով, որ ձեռք են բերում որոշակի հիւանդութիւններ, որոնք բաւականին տարածուած են: Այնուհետեւ հիւանդութիւնների որոշ մասը նոյնիսկ սկսում է տարածուել ընտանիքում եւ ողջ ՀՀում:

***Հարց 7**.- Ըստ Ձեզ՝ երիտասարդութեան զարգացման գործընթացում աւելի շատ դրակա՞ն, թէ՞ բացասական ազդեցութիւն է գործում աշխատանքային միգրացիան:*

Այս հարցին ԱԱԳ փորձագէտները պայմանաւորել են առաջին հերթին երիտասարդի անհատական առանձնայատկութիւններով: Հնարաւոր է, որ փորձի փոխանակման տեսանկիւնից բաւականին դրական է, սակայն ԱԱԳն որոշապէս ՀՀի տեսանկիւնից ունի մի շարք բացասական հետեւանքներ՝ անվտանգային, ժողովրդագրական եւն.: Իսկ արտերկրում որոշակի գիտելիքներ եւ փորձառութիւն ձեռք բերած երիտասարդները շատ դէպքերում հրաժարւում են այդ փորձով այստեղ կիսուել, վերադառնալ եւ այստեղ շարունակել իրենց մասնագիտական գործունէութիւնը: Մնացած շատ մեծ եւ նկատելի հատուածը հազիւ է կարողանում տնտեսական եւ անձնային որոշակի կայունացման հասնել:

Այնուամենայնիւ գաղթն ունենում է որոշակի բարեբեր ազդեցութիւն եւս, որովհետեւ գաղթածները կարողանում են յաղթահարել մեկուսացուածութիւնը եւ դուրս են գալիս մէկ ուրիշ այլազգային տարածք, այնտեղ ձեռք են բերում որոշակի նոր փորձառութիւն, նոր արժէքներ, վարուելակերպի նոր ձեւեր: Երբեմն այս դրական փոփոխութիւնները գաղթածը բերում է իր համայնք: Բազմաթիւ են օրինակները, մասնաւորապէս երիտասարդների պարագայում, երբ այնտեղ արտաքին տեսքին այնքան էլ ուշադրութիւն չեն դարձրել, բայց երբ վերադարձել են ՀՀ, գաղթածները նշել են, որ սափրլուելը, օծանելիք օգտագործելը, աւելի պատշաճ տեսքով հանրութեանը ներկայանալը դարձել են սովորութիւն:

Հարց 8.- Փորձագէտները երիտասարդների ՀՀում բարձր վարձատրութեամբ աշխատանք գտնելու առումով նշել են, որ արտերկրից եւ եւրոպայից վերադարձած երիտասարդները ունենում են լեզուի բարձր իմացութիւն: Հիմնականում ծրագրաւորման ոլորտում միքանի փոքր դասընթացներ անցնելով հեշտութեամբ մուտք են գործում այդ ոլորտ: Ի տարբերութիւն այն երիտասարդների, որոնք այստեղ յենքային լուրջ կրթութիւն են ստացել, սակայն լեզուի բարձր իմացութիւնը այնուամենայնիւ դառնում է առաջնահերթութիւն եւ միքանի քայլ առաջ է բերում տուեալ անձանց: Եթէ գնացած անձը հիմնականում հայաբնակ տարածաշրջանում է տեղակայուել եւ ոչ-մասնագիտական որեւէ բանով զբաղուել, տաքսի է վարել, մաքրման, կանաչապատման աշխատանքերում է ներգրաւուած եղել, լեզուի կատարելագործման չի հասել, վերադառնալուց յետոյ մրցունակութեան տեսանկիւնից հաւասար է - եթէ ոչ աւելի ցածր - տեղի բնակիչների հետ յարաբերակցութեամբ:

Հարց 9.- *«Մասնագիտութեան ընտրութիւնն արդեո՞ք կարող է պատճառ հանդիսանալ երիտասարդների աշխատանքային գաղթի դիմելուն»:*

Այս հարցին ի պատասխան՝ փորձագէտները նշել են, որ կան նման մասնագիտութիւններ, որոնք, ճիշտ է, որակի տեսանկիւնից բարձր են, սակայն ՀՀում ժամանակավրէպ են համարւում, ուստի թողնում հեռանում են: Մարդասիրական բնոյթի մասնագիտութիւններ են հիմնականում՝ հո-

գեբաններ, ընկերային աշխատողներ, ընկերաբաններ, իրաւաբաններ, այդ թւում նաեւ ծրագրաւորողներ, որոնք դրսում առաւել բարձր են վարձատրւում անգամ ժամավճարային հիմունքներով, քան այստեղ բարձր ծանրաբեռնուածութեամբ ու ոչ-ճկուն ժամանակացոյցով աշխատելու դէպքում: Կան դէպքեր, երբ ծրագրաւորողը վերադառնում է, սակայն առցանց հիմունքներով զուգահեռ աշխատում է արտերկրում, որի դիմաց մեծ գումարներ է վաստակում՝ ելնելով այնտեղի ազատ ժամանակացոյցի ստեղծած հնարաւորութիւններից:

ԱԱԳերի մէջ շատ քիչ են նրանք, ովքեր բարձր որակաւորում ունեցող մասնագէտներ են: Մասնագիտութեան ընտրութեան հարցն ամենայն հաւանականութեամբ առաւելապէս առնչւում է տեղեկատուական արհեստագիտութիւններին, որովհետեւ վերջիններիս զարգացումը ՀՀում բաւականին լաւ հիմքերի վրայ է դրուած, եւ այստեղ աշխատավարձի խնդիրն է, որը հնարաւորութիւն է ընձեռում, որ գնան եւ դրսում աւելի բարձր վարձատրուող աշխատանք գտնեն:

***Հարց 10**.- Մերօրեայ երիտասարդներն ինչպիսի՞ երկրներ են առաւել նախընտրում արտագաղթել, ո՞րն է հիմնական դրդապատճառը…*

Մերօրեայ երիտասարդների համար ամենանախընտրելի երկիրը, ըստ փորձագէտների, ԱՄՆն է, դրանից յետոյ եւրոպական երկրներն են եւ վերջում նոր, ի տարբերութիւն վերջին տարիների, ՌԴն: Աւելի քիչ են ցանկութիւն յայտնում ներկայիս ՌԴ գնալ հենց երիտասարդները:

Փորձագէտներից երկուսն էլ նշել են, որ իրենք այդ առումով յատուկ հետազօտութիւն չեն իրականացրել, ուստի չեն կարող ամբողջական պատասխան տալ, սակայն նշել են, որ ՀՀից հիմնական գաղթածների 50 տոկոսը ուղեւորւում է ՌԴ, ապա յաջորդում են եւրոպական երկրները եւ ԱՄՆը: Քանի որ լեզուական, սահմանների հատման, գաղթային պայմանների առումներով ՌԴն աւելի մատչելի է, ուստի գաղթողների հիմնական մասը մեկնում է այնտեղ:

***Հարց 11**.- Ընկերայնացման գործընթացի հիմնական բարդութիւնների խնդիր:*

Այս մասին խօսելով՝ փորձագէտները նշեցին, որ առաջնայինը տնտեսական խնդիրներն են: Յատկապէս փախստականների կարգավիճակով գնացածները՝ ճամբարների բնակչութեան հետ ունեցած խնդիրները, դժուարութիւնները շատ դէպքերում չլուծած ետ են վերադառնում: Դրանք շատ յաճախ կարող են լինել ամենաառաջնահերթ կենցաղային հարցերի ապահովման, բնակարանի վարձը տալու հետ կապուած խնդիրներ, այլեւ այնտեղի աշխատաշուկայում մրցունակ չլինելու կամ այստեղից միքանի աստիճան ցածր աշխատանք գտնելու փաստով պայմանաւորուած, որը ընդվզեցնում է մեկնած երիտասարդին, քանի որ նա գնում է աւելի բարձր

ակնկալիքներով, բայց սովորաբար աւելի ցածր աստիճանից է ստիպուած լինում մեկնարկել իր գործունէութիւնը, քան մեկնարկում էր իր բնօրրանում:

Փորձագէտներից մէկն էլ յարմարման գործընթացի առումով նշեց, որ ըստ 2021ի մի հետազօտութեան (որի թեման է եղել «Յետխորհրդային Հայաստանի բնակչութեան արտագաղթը գաղթային ցանցի ենթախորքում») յստակեցուել է, որ ընկերային ցանցերը բաւականին լաւ ընկերային աղբիւր են, ազդում են մասնաւորապէս աշխատանք գտնելու, բնակարան վարձակալելու հարցերում: Բայց ամէն դէպքում գաղթածները խնդիրներ ունենում են յատկապէս մշակութային պատշաճեցման առումով, որովհետեւ արժէքային համակարգի փոփոխման, լեզուական, կենցաղային եւ այլ խնդիրներ են առաջանում: Այստեղ հարկաւոր է հաշուի առնել այն, որ, օրինակ, գաղթածների պատշաճեցումը ՌԴում հատուածային բնոյթ է կրում (կարող է լինել մշակութային, ընկերային կամ հաղորդակցման՝ նոր հմտութիւնների), քանի որ նրանք անդրազգային գաղթածներ են, այսինքն՝ նրանք միաժամանակ ե՛ւ նախկին հասարակութիւնում են (ծագման երկրի հասարակութիւն), ե՛ւ միաժամանակ նոր՝ ընդունող հասարակութիւնում են:

***Հարց 12**.- «Ի՞նչ ատակութիւններ են հարկաւոր երիտասարդին գաղթի դիմելու համար, եւ ի՞նչ ատակութիւններով է երիտասարդը վերադառնում մեկնման երկրից, որոնք օգտագործում է ՀՀում ու հարազատ մարզում»:*

Այս հարցին ի պատասխան՝ փորձագէտներից մէկը նշեց, որ այդ դաշտը համեմատաբար կանոնակարգուած է ՀՀում. երիտասարդները մեկնում են ուսումնական ծրագրերով կամ աշխատանքային պայմանագրերով միջպետական պայմանաւորուածութեամբ, այսինքն՝ ոչ թէ անձի մակարդակով է տեղի ունենում, այլ կառավարութեան: Այս դէպքում համատարած վերադառնում են եւ վերադարձի դէպքում կարողանում են աւելի մրցունակ լինել աշխատաշուկայում եւ շատ աւելի հեշտօրէն են կարողանում իրենց կայացնել: Ամենակարեւոր ու դրական արդիւնքը հենց այն է, որ գնալու ցանկութիւն այլեւս չեն ունենում: Պատճառը ոչ թէ այն է, որ այնտեղ նրանց լաւ չեն վերաբերուել, այլ այն, որ վերադարձից յետոյ այստեղ առաւել լայն հնարաւորութիւններ են բացւում նրանց առաջ: Նրանք հիմնականում արհեստաւորական մասնագիտութիւնների տէր մարդիկ են, բայց որոշակի մասն էլ ընդհանրապէս մասնագիտութիւն չունի, ուղղակի սեւագործ աշխատանք կատարելու համար են գնում: Արհեստաւորական ոլորտի հետ կապուած որոշակի հմտութիւններ են նրանք ձեռք բերում, բայց երբ վերադառնում են, դրանց կիրառութեան շրջանակները շատ փոքր են՝ ընտանիք, համայնք: Լինում են նաեւ յաջողակներ, որոնք որոշակի գումարներ են զուգահեռաբար վաստակում՝ այստեղ իրենց

մասնագիտութեամբ փոքր *բիզնէս*ներ ստեղծելով կամ արհեստանոցներ բացելով, որոնք, ըստ հետազօտողների, շատ չեն, միքանի դէպքեր են:

***Հարց 13**.- «Աղջի՞կ, թէ՞ տղայ երիտասարդներն են առաւել շատ արտագաղթում»:*

Այս հարցադրմանը փորձագէտները պատասխանել են, որ տղայ արտագաղթողների թիւը շատ աւելի մեծ է, քան աղջիկներինը: Սա ՀՀում պայմանաւորուած է ոչ միայն ընկերային կամ տնտեսական, այլեւ անվտանգային հարցերով, ծառայութիւնից խուսափելու փաստով: Պէտք է նշել, որ ծառայութիւնը վերջացրած քաղաքացիների առջեւ եւս ծառացել է նորից զօրակոչուելու հարց: Աղջիկների պարագայում տարածուածութիւնը 30ից բարձր տարիքային խմբում է: Բուհն աւարտած աղջիկները միտում ունեն իրենց այստեղ կայացնելու, իսկ երեսունն անց կանայք միտուած են տեղափոխուելու կա՛մ ընտանիքի վերամիաւորման, կա՛մ խնամքի կազմակերպման ոլորտում ներգրաւման համար: Դրանք երեխաների խնամքի կազմակերպումն են, տարեցների խնամքի կազմակերպման հարցերը, տնային տնտեսութիւններում աշխատելու հնարաւորութիւնները: Լինում են դէպքեր, երբ ՀՀից նմանատիպ աշխատանքների գնում են նաեւ աւելի վաղ գնացած եւ որոշակի կայացուածութեան հասած ընտանիքներում աշխատելու:

ՀՀից արտագաղթելու դէպքում, բացի աշխատատեղերի բացակայութիւնից, ցածր աշխատավարձից, կան նաեւ սպասելիքների, մասնաւորապէս ինքնակայացման առնչուած խնդիրներ, որոնք ծննդավայրում տեղի չեն ունեցել, ուստի մտածում են, որ կարելի է դրսում լուծել: Բացի դրանից՝ տղաների զինուորական ծառայութեան խնդիրն է բարձրացւում, ուստի եւ մինչ այդ տարիքը մեկնում են: Աղջիկների պարագայում առհասարակ կրթական կամ ամուսնական գաղթ է: Կրթական գաղթն աղջիկների համար յարմար խողովակ է՝ յետագայում արտերկրում հաստատուելու: Աղջիկների համար կայ նաեւ ընտանիքի վերամիաւորման խնդիր: Այսպիսով, աղջիկները կա՛մ մեկնում են որպէս ընտանիքի անդամ, կա՛մ ուսում ստանալու նպատակով: Գաղթի հոսքերի մէջ աշխատելու մեկնող երիտասարդ աղջիկների թիւը թերեւս չի գերազանցի 5-7%ը: Նրանք մեծ մասամբ մեկնում են հարազատների կամ բարեկամների մօտ աշխատելու:

***Հարց 14**.- «Արդեո՞ք կապ ունի ՀՀում տիրող պատերազմական իրավիճակը երիտասարդների աշխատանքային գաղթի դիմելու առումով»*:

Այս հարցին՝ փորձագէտները նշեցին, որ միանշանակ կապ կայ, եւ հենց դրանով է պայմանաւորուած նախկինում ՌԴ, իսկ այժմ ԱՄՆ եւ եւրոպական երկրներ մեկնելու փաստը: Վերջերս բախուել ենք նմանատիպ խնդիրների, երբ այստեղի ընտանիքները, զինուորական ծառայութիւնից խուսափելու համար, այնտեղ կարգավիճակ էին ձեռք բերել, նորից ետ են եկել ու այստեղ նոր կարգավիճակ ձեռք բերելու հարցեր են

փորձում կարգաւորել: Այդպիսի ընտանիքներում ոչ միայն զինուորական տարիքի երիտասարդները նման միտում ունեն, այլեւ ողջ ընտանիքն է հակուած գաղթի:

Փորձագէտները այս առնչութեամբ միանշանակօրէն ընդգծեցին, որ ՀՀում տիրող պատերազմական իրավիճակը երիտասարդների աշխատանքային գաղթի դիմելու առումով իհարկէ կապ ունի: Փորձագէտներից մէկը նշեց, որ բազմաթիւ են դէպքերը, երբ հենց այդ պատճառով են դիմում գաղթի: Կայ նաեւ հակառակ երեւոյթը, երբ վերադառնում են յատկապէս իրենց սահմանամերձ բնակավայրը պաշտպանելու: Պատերազմական իրավիճակը իրապէս ազդում է, սակայն ունի երկու դրսեւորում, երբ մի խումբը մնում է, չի մեկնում: Կան դէպքեր, որ մարդիկ ուղղակի պատերազմից խուսափելու համար փորձում են մեկնել արտերկիր՝ իրենց ընտանիքները եւս հանելով այդ իրավիճակից:

Հարց 15.- *«Արդեո՞ք երիտասարդները աշխատանքային գաղթի դիմում են բանակում ծառայելուց խուսափելու պատճառով, թէ՞ գաղթի դիմում են ծառայութիւնից զօրացրուելուց յետոյ»*:

Այս հարցին՝ փորձագէտների կողմից հնչել է հետեւեալ պատասխանը. մինչեւ վերջին տարիները ՀՀից մեկնող երիտասարդները մեկնում էին հիմնականում ծառայութիւնից յետոյ, վերջին ժամանակներում դա տեղի է ունենում շատ աւելի վաղ: Սակայն պէտք է նշել, որ դա ոչ միշտ է յաջողւում, քանի որ 14 տարին լրացած լինելու պարագայում արտերկիր մեկնելու դէպքում պետութիւնը օրէնսդրական խնդիրներ է ստեղծում: Այսպիսով, ցանկութիւնը՝ մինչեւ զինուորական ծառայութիւնը աւելի մեծ է, սակայն իրականում իրողութիւնը ծառայութիւնն աւարտած լինելու դէպքում աւելի իրատեսական ու մեծ է:

Հարց 16*.- ՀՀից արտաքին աշխատանքային գաղթի դիմելու ռիսկեր:*

Այս մասին՝ փորձագէտներից մէկը նշեց, որ 21րդ դարում ամենամեծ աղբիւրը մարդկային ներուժն է, եւ արտագաղթելը պետական տեսանկիւնից լուրջ անվտանգային ու ժողովրդագրական խնդիրներ է առաջացնում:

Անձնային տեսանկիւնից առաջնային ռիսկերը վերաբերում են աղջիկներին, մեծանում է մարդու շահարկման (trafficking) վտանգը, մասնաւորապէս նրանց պարագայում, որոնք մեկնում են ամուսնական կարգավիճակ չունենալով: Հիմնականում արաբական երկրներ տեղափոխուած կանայք են, ապա նաեւ՝ Թուրքիա, Միացեալ Արաբական Էմիրութիւններ, Եգիպտոս:

Նշուեց, որ ռիսկերը բազմաթիւ են, այն էլ լուրջ ժողովրդագրական խնդիրներ առաջացնող: Առաջինը այն է, որ մարդկային աղբիւրները ՀՀի համար շատ կարեւոր են, որովհետեւ այդ ներուժը լուծելու է սահմանամերձ բնակավայրերի խնդիրը: Երկրորդը տնտեսական խնդիրն է, երբ

շատ համայնքներ զրկւում են երիտասարդ, աշխատունակ տարիքի բնակչութիւնից, ուստի եւ ընկերային ծրագրերի իրականացումը դառնում է չափազանց բարդ: Երբ ուզում ես ինչ-որ գործ նախաձեռնել, տեսնում ես, որ այդ ներուժը՝ երիտասարդութիւնը, որի շնորհիւ միայն հնարաւոր է այդ ծրագիրը կեանքի կոչել, գտնւում է արտերկրում: Ճիշտ է, արտասահմանից գումարների փոխանցումը որոշակիօրէն նպաստում է, որ ՀՀում աղքատութեան խնդիրը մեղմացուի, բայց նաեւ ընկերային առումով այդ սեռատարիքային կազմի միջեւ որոշակի խզումներ է առաջացնում:

***Հարց 17**.- «Որո՞նք են այն կառոյցները, որ խորհուրդ էք տալիս դիմել գաղթի միտում ունեցող քաղաքացիներին, որպէսզի տեղափոխութիւնը առաւել անվտանգ կազմակերպուի»*:

Այս հարցին՝ փորձագէտները պատասխանել են այսպէս. ՀՀում հիմնական այդպիսի գործունէութիւն ծաւալողը «Ամքոր Հայաստան» բարեգործական հիմնադրամն է, որը միջազգային ֆինանսաւորում ունեցող հասարակական կառոյց է: Այն մարդու չարաշահման ռիսկերի կանխարգելման ուղղութեամբ բաւականին լայնածաւալ աշխատանքներ է իրականացնում ոչ միայն գնացող, այլեւ այնտեղից վերադառնալու ցանկութիւն ունեցող քաղաքացիների հետ, ովքեր այնտեղ արդէն իսկ ենթարկուել են չարաշահման:

Փորձագէտները անվտանգ տեղափոխութիւնների կազմակերպման վերաբերեալ նշեցին նաեւ, որ հիմնականում ներքին գործերի նախարարութեան ստորաբաժանում համարուող *Միգրացիոն կոմիտէ*ից քաղաքացին կարող է ստանալ տեղեկատուութիւն՝ ինչպէս մեկնել աշխատանքային գաղթի, ո՛ր երկրում գաղթի ի՛նչ պայմաններ են գործում, սահմանը հատելու ժամանակ ի՛նչ պէտք է անել: Նաեւ նշուեց, որ կան հասարակական կազմակերպութիւններ, որոնք նոյնպէս զբաղւում են այդ հարցերով եւ կարող են աջակցել նմանատիպ հարցերում:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹԻՒՆ

Վերլուծելով յօդուածի շրջանակում իրականացուած հետազօտութեան արդիւնքները, առաջարկում ենք բարձրացնել կրթական մակարդակը, քանի որ անձնային դաշտի ռիսկերով է պայմանաւորուած ե՛ւ չարաշահման ենթարկուելը, ե՛ւ պետական շահերը վնասելով արտագաղթելը, ե՛ւ անձնային մակարդակում վնասներ կրելը: Դրանք հիմնականում ցածր կրթական մակարդակ ունենալու եւ իրազեկուածութեան ցածր մակարդակի հետ են կապուած, քանի որ ՀՀ դպրոցներում նման աշխատանք չի իրականացւում, թէ՝ ո՛ր պարագայում եւ ի՛նչպէս է պէտք արտագաղթի երեւոյթին մօտենալ: Որոշապէս չարաշահման յաճախ ենթարկւում են անչափահասները, որոնք, ընկերային խնդիրների բերմամբ, ընդունում են ե՛ւ իրենց անձին, ե՛ւ պետութեանը վնաս հասցնող առաջարկներ:

Առաջարկում ենք նաեւ, որ պետութեան կողմից նշանակուի լիազօր մարմին, որ զբաղուի աշխատանքային գաղթածներով, նրանց խնդիրներով, իրազեկմամբ, իրաւունքների, շահերի պաշտպանութեամբ եւ այլ հարցերով, որպէսզի աշխատանքային գաղթը պետութեան կողմից կառավարելի եւ վերահսկելի լինի:

Առաջարկում ենք նաեւ աշխատանքային գաղթի առումով պայմանագրեր կնքել ՌԴից տարբեր այլ երկրների հետ եւս, եւ եղանակային գաղթի գրեթէ 100% կախուածութիւնը ՌԴից նուազեցնել: Սա միայն կը նպաստի ՀՀից երկարաժամկէտ եւ մշտական գաղթի կրճատմանը, գաղթածներն աւելի պաշտպանուած կը լինեն եւ ՀՀ մտնող դրամական հոսքերը կ'աւելանան:

THE ISSUE OF YOUTH LABOR MIGRATION
(EXPERIMENTAL SOCIOLOGICAL RESEARCH)
(SUMMARY)

ANDRANIK SHAHINYAN
shahinyan_90@mail.ru

This article reviews a sociological examination based on qualitative research and analysis on the issue of youth labor migration. The issue under consideration was considered during a study of a sample of young people with a migration trend and related it to gender, age and social status, as part of a scientific study conducted in the Republic of Armenia. Among the experts are specialists of public and state-branch structures. As part of the research of the article, we examined the concepts of "migration" and "development", in particular, in connection with the process of youth development, and emphasized the importance of youth employment issues, which are the cause of foreign labor migration of young people from the RA.

In the framework of the research, we also addressed the negative consequences of labor migration and risks in the process of self-realization of young people as well as issues of choosing a profession and choosing destination countries. We also considered the issues of safe movement, taking into account the advice of experts regarding the structures dealing with this problem.